

Թեամբ մեծամեծ վարդապետաց եւ նոցին իսկ վկայական քարտիզիւ եւ նամակաւ, եւ հաճութեամբ բազում մեծամեծ բարեպաշտ անձանց, կը ձեռնադրէ զՄեսրոպ Ա., Եպիսկոպոս Լամբրոնի «ահաւոր անուամբ ամենասուրբ Երրորդութեան եւ նշանաւոր Սուրբ Խաչիւս, եւ հզօր Աջով սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, եւ Սրբոյն Յակոբայ Մեծբնայ սքանչելագործ Հայրապետին եւ այլոցն սրբոցն որք կան ի սուրբ Աթոս», անշուշտ Ստոյ:

Եպիսկոպոս ձեռնադրուած ըլլալուն վկայական-կոնդակով ամրացուած կը դառնան Կ. Պոլիս Սկիւտարի կողմանէ, ուր կը հանդիպի Պրոխորոնի արկածն (ինչպէս տեսանք Արեւ Արքեպ. ի կենսագրութեան մէջ (վերն էջ 240—249), եւ Կ. Պոլսոյ լատին Եպիսկոպոսը տեսնելով ասոնց անկանոնականութիւնը, կը ղրկէ զիրենք Հռոմ, որպէս զի իրենց գործած յանցանքին լուծման հնարաւորութիւնը գտնեն Ս. Քահանայապետէն, ինչպէս ալ տարիներէ ետեւ՝ երկար ապաշխարանքներով, կը գտնեն, քանի որ ձեռնադրութիւններն վաւեր էին, բայց ոչ օրինաւոր:

Յակովբոս - Մեսրոպ Արքեպ. ն արդէն 1745ին սկիզբը կը գտնենք Հռոմ եւ նոյն տարին գացած Իտալիոյ Նապոլի քաղաքն, եւ 1746ին ի Հռոմ, ուր մինչեւ մահը կեանքն անցուցած կ'երեւայ: Հռոմ Ս. Մարիամ Եգիպտացի ազգային եկեղեցւոյ Պատարագներու արձանագրութեանց գրքերուն մէջ՝ Մեսրոպ Եպ. ի նոյն եկեղեցին 1745 Յունուարին մէջ պատարագ մա-